

ԿԱՐԾԻՔ

Գևորգ Վարդանի Բարսեղյանի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովումը» վերտառությամբ, ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Օպերատիվ-հետախուզական գործունեությունը հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետ գործիքակազմերից է, հետևաբար դրա պատշաճ և իրավաչափ իրականացման ապահովումը իրավական պետության առաջնահերթություններից պետք է լինի: Այս համատեքստում առանձնակի կարևորություն ունի օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովումը:

Հեղինակն արդարացիորեն նշել է, որ օպերատիվ-հետախուզական գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր քրեական իրավունքով (օրենքով) կարգավորման անհրաժեշտություն ունեն: Այդ հարցերի թվին են դասվում, մասնավորապես, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց) կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքում քրեաիրավական արձագանքման խնդիրները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում հանցագործության պրովոկացիան, պրովոկատորի և պրովոկացիայի հետևանքով հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցերը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման (լրամշակման և/կամ մշակման) հարցերը:

Հեղինակի կողմից նման խնդրահարույց, քրեական իրավունքի տեսությունում միանշանակ պատասխաններ և լուծումներ չունեցող հարցերի թիրախավորված վերհանումը և հետազոտումը վկայում են հետազոտվող թեմայի արդիականության և հրատապության մասին:

Աշխատանքը շարադրված է տրամաբանական հաջորդականությամբ, թեմայի շրջանակում քննարկվող ենթահարցերի գրազետ առանձնացմամբ: Այն բաղկացած է ներածությունից, 3 գլխից, դրանցում ներառված ընդհանուր թվով 8 պարագրաֆից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտության իրականացման համար կիրառված պատշաճ մեթոդաբանությամբ, մեծաքանակ և արդիական աղբյուրներով, դրանց կատարված պատշաճ հղումներով:

Ներածությունում հեղինակը հիմնավորել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացրել հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, հետազոտության իրավական և փորձառական հիմքերը, հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը և հետազոտության գիտական նորույթը:

Ատենախոսության՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման էությունը և արդի հիմնախնդիրները» վերտառությամբ 1-ին գլխում հեղինակն անդրադարձել է օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման հասկացությանն ու ապահովման ուղղությունների հակիրճ բնութագրին և միջազգային/վերաբնակային իրավական ակտերում և այլ պետությունների քրեական օրենսդրություններում տեղ գտած, օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանն ուղղված վերաբերելի կարգավորումներին:

Տվյալ գլխի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքներով՝ հեղինակը կատարել է արժեքավոր մի շարք եզրակացություններ, որոնցից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները.

- Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովումը օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության և ներքին ու արտաքին ապակայունացնող միջամտությունից ապահովման նպատակով իրականացվող իրավաձևավորման գործընթացն ու արդյունքն է, ինչպես նաև իրենց լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց գործունեության ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները կարգավորող քրեաիրավական նորմերի կենսագործումը:
- Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման առաջարկվող սահմանումից հետևում է, որ ՕՀԳ քրեաիրավական ապահովումն ունի կարգավորող և պաշտպանող ուղղություններ՝ քրեական օրենսդրության խնդիրներին, մեթոդներին ու միջոցներին համապատասխան: Այս ուղղությունները փոխկապակցված և փոխլրացնող մեխանիզմներ են, որոնցից առաջինի՝

կարգավորող ուղղության ձևավորումը հիմնականում պետք է արտահայտվի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքում քրեական պատասխանատվությունը բացառող նորմի մշակմամբ, իսկ երկրորդի՝ պաշտպանող ուղղության ձևավորումը՝ պետք է դրսևորվի Հատուկ մասի հանցակազմերի լրամշակման կամ մշակման տեսքով: Ըստ էության, այս երկու ուղղությունների առանձնացումը համապատասխանում է Քրեական օրենսգրքի կառուցվածքին՝ ընդհանուր և հատուկ մասերի բաժանված լինելու տեսանկյունից, քանզի կարգավորող ուղղությանը վերաբերող նորմերը պետք է գետեղվեն Ընդհանուր մասում, իսկ պաշտպանող ուղղությանը վերաբերող նորմերը՝ Հատուկ մասում:

- Միազգային/վերալեռական և այլ պետությունների վերաբերելի փորձի ուսումնասիրումը օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման հիմնավորվածության և համապատասխան նորմերի իրավական մոդելավորման տեսանկյունից մեթոդոլոգիական օժանդակություն ունի: Միջազգային/վերալեռական փաստաթղթերում և այլ պետությունների օրենսդրություններում տեղ գտած կարգավորումների հետազոտումը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական կարգավորման առկա ընդհանուր վիճակի վերաբերյալ, ինչպես նաև թույլ է տալիս ըմբռնել դրա զարգացման միտումները՝ այդպիսով ուրվագծելով նաև ներալեռական օրենսդրության կարգավորումների արդիականացման, իրավական մոդելավորման հեռանկարը:

Ատենախոսության՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման ուղղությունները» վերտառությամբ 2-րդ գլխում հետազոտվել են քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափության կոնկրետ պայմանների առկայությամբ վնաս պատճառելու դեպքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվության բացառման արդի հիմնախնդիրները, հեղինակի կողմից առաջարկված, «Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը» վերտառությունը կրող քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանները, օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման

պաշտպանող ուղղության ձևավորման և/կամ կատարելագործման նպատակով հետազոտվել են Քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված համապատասխան հանցակազմերի լրամշակմանը և, ըստ անհրաժեշտության, նոր հանցակազմերի մշակմանը վերաբերող հարցերը:

Այս գլխի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքներով հեղինակը կատարել է արժեքավոր մի շարք եզրակացություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

➤ Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց կողմից այլ անձանց կատարվող/կատարած հանցավոր ոտնձգությունների կանխարգելման կամ դրանց հետևանքների կանխման, հանցագործությունների բացահայտման կամ անհրաժեշտ ապացույցների ձեռքբերման ընթացքում ստեղծվում է օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու իրական հնարավորություն: Այն ենթադրում է ՕՀԳ իրականացնող անձի գործունեությունում (արարքում) ձևականորեն հանցավոր տարրի առկայություն: Հետևաբար, քրեական օրենքը պետք է նախատեսի իրավաչափության կոնկրետ պայմանների առկայության դեպքում ՕՀԳ իրականացնող անձին ձևականորեն հանցավոր համարվող արարքի համար քրեական պատասխանատվության չենթարկելու հնարավորություն՝ արարքում հակաիրավականության բացակայության և դրա՝ սոցիալապես օգտակար ու նպատակադրված լինելու հաշվառմամբ:

➤ Օպերատիվ-հետախուզական գործունեության կարգավորող ուղղության համապարփակ և ամբողջական կարգավորման, իրավական համակարգվածության (կոմպակտության), անհիմն տարբերակված մոտեցման բացառման, թափանցիկության ապահովման, ինչպես նաև քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառված վնասի իրավաչափության՝ քրեական օրենսգրքով սահմանված միատեսակ պայմանների նախատեսման տեսանկյունից նպատակադիր և արդարացված է ՕՀԳ իրականացնող անձի (ՕՀԳ իրականացնող մարմնի աշխատակցի և ՕՀԳ իրականացնող մարմնի հետ համագործակցող անձնի) կողմից ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու վերաբերյալ կարգավորումները ամրագրել Քրեական օրենսգրքի մեկ հոդվածում:

Արժեքավոր են հեղինակի կողմից ներկայացված նաև այն առաջարկները, որոնք ուղղված են Հատուկ մասի մի շարք հոդվածների լրամշակմանը՝ օպերատիվ-հետախուզական գործունեության, այդ թվում՝ որպես ինքնուրույն գործունեություն

իրականացվող, օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովման նպատակով:

Ատենախոսության՝ «Հանցագործության պրովոկացիան օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման համատեքստում» վերաառությամբ 3-րդ գլխում հեղինակը հետազոտման է ենթարկել հանցագործության պրովոկացիայի իրավական էությունը և հատկանիշները, դրա սահմանազատումը հանցակցությունից, իրավաչափ օպերատիվ-հետախուզական միջոցառումների՝ հանցագործության պրովոկացիայից տարանջատման ՄԻԵԴ չափանիշները, ինչպես նաև հանցագործության պրովոկատորի և պրովոկացիայի ենթարկված անձի արարքների քրեաիրավական գնահատականը: Այս համատեքստում կարևոր են հեղինակի հետևյալ եզրակացությունները և առաջարկությունները:

- Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակցի կողմից հանցագործության պրովոկացիա իրականացվելու դեպքում արարքը չի կարող որակվել պաշտոնական լիազորությունները անցնելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով, քանի որ հանցագործության պրովոկացիան կատարվում է հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հատուկ նպատակով՝ պրովոկացված անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելու նպատակով:
- Պրովոկատորի արարքը միայն հանցագործության պրովոկացիայի առկայության դեպքում չի կարող որակվել նաև ապացույց կեղծելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով, քանի որ միայն հանցագործության պրովոկացիա իրականացնելով պրովոկատորը ապացույց չի կեղծում կամ կեղծ ապացույց չի ներկայացնում, այլ միայն անձին սադրում է հանցանքի կատարմանը՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով:
- Պրովոկատորի արարքը չի կարող որակվել նաև Քրեական օրենսգրքի՝ «Հանցագործության մասին չհայտնելու» վերաառությամբ 473-րդ հոդվածով, քանի որ հանցագործության պրովոկացիայի նպատակը անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելն է, մինչդեռ հանցագործության մասին չհայտնելու նպատակը, ըստ էության, հանցանք կատարած անձին կամա, թե ակամա աջակցելն է, նրա անձի կամ հանցագործության բացահայտմանը խոչընդոտելը:
- Առաջարկվել է էապես խմբագրել Քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածը՝ քրեական պատասխանատվություն սահմանելով ցանկացած հանցագործության

պրովոկացիայի համար, այն հիմնավորմամբ, որ որևէ երևույթի քրեաիրավական արգելքը պետք է ներառի այդ երևույթի հնարավոր բոլոր դրսևորումները:

Ատենախոսության վերաբերյալ առկա են նաև որոշ նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին:

1. Հեղինակն առաջարկում է Քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածը ենթարկել էական խմբագրման՝ որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ ամրագրելով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելու նպատակը:

Քննարկվող հանցակազմը էական վերափոխման ենթարկելով՝ հեղինակը ներկայիս խմբագրմամբ գործող հոդվածի տեքստից հեռացրել է Օրենսդրի կողմից ամրագրված նպատակները, մասնավորապես «հանցագործության կամ դրան անձի մասնակցության արհեստական ապացույց ստեղծելու կամ շանտաժի նպատակով» կատարված լինելու հանգամանքները: Այս համատեքստում վիճահարույց է շանտաժի նպատակով իրականացված լինելը՝ որպես քննարկվող հանցակազմի կատարման օրենսդրորեն ամրագրված նպատակ չլիտարկելը: Կարծում եմ՝ նման առաջարկը հավելյալ հետազոտման կարիք և հրապարակային պաշտպանության ընթացքում հեղինակի կողմից լրացուցիչ և հիմնավոր պարզաբանման անհրաժեշտություն ունի:

Հանցագործության պրովոկացիայի քրեականացման համատեքստում հետաքրքիր է իմանալ նաև հեղինակի դիրքորոշումը քրեական իրավունքի տեսությունում և հետախուզական գիտությունում տեղ գտած այն տեսակետի վերաբերյալ, ըստ որի՝ կազմակերպված հանցավորության, մասնավորապես, առանձնապես ծանր հանցանքի բացահայտման միակ միջոց հանդիսացող պրովոկացիան պետք է համարվի իրավաչափ, եթե դրա միջոցով հնարավոր է եղել խափանել հանցավոր կազմակերպության գործունեությունը կամ կանխել դրա կողմից կատարվող հանցանքները:

2. Վիճահարույց է և լրացուցիչ մեկնաբանման կարիք ունի հեղինակի՝ ատենախոսության 165-րդ էջում կատարած եզրահանգումը այն մասին, որ «պրովոկացիայի հետևանքով պրովոկացված անձի կողմից հանցանք կատարելու դեպքում, ինչպիսի հանգամանքը պրովոկատորը գիտակցում է, պրովոկատորը, հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվության ենթարկվելուց բացի, պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի նաև այն հանցագործության դրդչության կամ կազմակերպման համար, որին պրովոկացրել (ըստ էության՝ դրդել) էր: Պրովոկացիայի հետևանքով հանցանք կատարելու հանգամանքի գիտակցման արդյունքում հանցակից դարձած պրովոկատոր և պրովոկացիայի ենթարկված անձ-պրովոկացված հանցանքի կատարող հարաբերությունների

նկատումամբ, մեր կարծիքով, կիրառելի են նաև հանցակցի սահմանազանցման վերաբերյալ կարգավորումները»:

Նախև առաջին հերթին և/կամ առաջարկի դեպքում պարզ չեն հանցագործության պրովոկատորի և հանցագործության դրոշի կամ կազմակերպչի սահմանազատման չափանիշները: Այն դեպքում, երբ պրովոկատորը վեր է ածվում դրոշի կամ կազմակերպչի, կարծես, հեղինակի կողմից առաջարկվող, հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող նպատակը, այն է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով հիմքեր ստեղծելը, բացակայում է:

Կարծում եմ, որ նման մոտեցումը լրացուցիչ հետազոտման, հիմնավորման և մեկնաբանման կարիք ունի:

3. Հեղինակն առաջարկում է Քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 478.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 478.1. Օպերատիվ-հետախուզական միջոցառում ապօրինի իրականացնելը

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կամ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենքով սահմանված պահանջների, հիմքերի կամ պայմանների խախտմամբ իրականացնելը՝

...

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

...

3) տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով՝

... »:

Ընդհանուր առմամբ ողջունելի համարելով օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ապօրինի իրականացնելու քրեականացման առաջարկը, այդուհանդերձ, կարծում եմ, որ հեղինակի կողմից առաջարկվող հանցակազմն ունի բավականին մեծ բլանկետայնություն, ինչով պայմանավորված էլ այն կարող է խոցելի լինել իրավական որոշակիության տեսանկյունից:

Հեղինակի այս առաջարկը, կարծում եմ, հավելյալ հետազոտման կարիք ունի՝ հստակեցնելու և պարզաբանելու այն պահանջները, հիմքերը և պայմանները, որոնց խախտմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարող են այն իրականացրած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ:

Առաջարկվող հանցակազմի բովանդակության ուսումնասիրման համատեքստում հարկ եմ համարում նաև արձանագրել, որ վիճահարույց է հեղինակի կողմից որպես

տվյալ հանցակազմի ծանրացնող հանգամանք «տեղեկության զաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով» կատարված լինելը նախատեսելը, քանի որ օպերատիվ-հետախուզական միջոցառումները դեպքերի ճնշող մեծամասնությունում իրականացվում են հենց տեղեկության զաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով: Այսինքն, տեղեկության զաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելը ՕՀՄ-ների էության, կարծես թե, անբաժանելի մասն է: Հետևաբար, կարծում եմ, որ ծանրացնող այս հանգամանքի ամրագրման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ ստացվելու է մի իրավիճակ, երբ այս հանցակազմով դեպքերը գրեթե միշտ որակվելու են ծանրացնող հանգամանքով:

Ներկայացված նկատառումները, սակայն, չեն նսեմացնում կատարված աշխատանքի գիտական արժեքը և դրական գնահատականը:


Գևորգ Վարդանի Բարսեղյանի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովումը» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի՝ իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ հեղինակի հրապարակած գիտական հոդվածները՝ ատենախոսության հիմնական դրույթները:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ,

իրավաբանական գիտությունների թեկնածու




Արման Հովհաննիսյան

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Արման Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

ղեկանի տեղակալ



Աշոտ Պետրոսյան

08.12.2025թ.